Արձանագրություն N 2
«ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման նիստից

Պատվիրատուի հասցեն՝ ք. Երևան, Միծեռնակաբերդի զբոսայգի 1 «06» «հուլիս» 2017թ.
ժ 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Աբրահամյան
Հանձնաժողովի անդամներ՝
Մեյրան Զորողլյան- պահեստապետ
Արթուր Գասպարյան- տնօրենի օգնական
Ցոլակ Սարգսյան- սպասարկման ծառ. պետ
Հանձնաժողովի քարտուղար՝ Օլգա Սահակյան

I. **Գնանշման հարցման միջոցով ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին**

Համաձայն ՀՀ Կառավարության որոշման 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 46-րդ կետի հրավիրվել է հայտերի գնահատման նիստ, որի ընթացքում արձանագրվել է, որ.

1.1 Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, ինչպես նաև բավարարում է հրավերի 2.4 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերվող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջներին:

1.2 Մասնակցի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

II. **Գնանշման հարցման միջոցով ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատման արդյունքների հաստատման և ամփոփման մասին**

2.1 Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել
Թիվ 1,2,3 չափաբաժինների համար «Վի էԼ Վի Սենթր» ՍՊԸ-ին

2.2 Ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո: «Գնումներ մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիրը կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածը, որը ըստ նույն հոդվածի 3-րդ կետի տվյալ գնման ընթացակարգի համար առնվազն 5 օրացուցային օր է:

2.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն հայտերի գնահատման նիստին հաջորդող աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակել տեղեկագրում:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արման Աբրահամյան

Անդամներ՝

Մեյրան Զորողլյան

Արթուր Գասպարյան

Ցոլակ Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Օլգա Սահակյան